

Ա. ԻճճԻԿՅԱՆ

ԼԵՐՄՈՆՏՈՎԸ ԵՎ ՀԱՅ ՎԱՅՄՈՒՆԱԿԱՆՆԵՐԸ

Հայ նոր դրականության և հասարակական մտքի զարգացման պատմությունն ամենասերտ կերպով կապված է ուս գրական-հասարակական կյանքի և մտքի հետ:

Մեր ժողովրդի պատմության մեջ խոշոր երևույթ էր 1827—1828 թ.թ. ուս-պարսկական պատերազմի հետևանքով Հայաստանի միացումը Ռուսաստանին: Այդ օրվանից հայ ժողովրդի բախտը անխզելի կերպով կապվեց ուս մեծ ժողովրդի բախտի հետ:

Ի՞նչ խոսք, հայ հասարակական մտքի առաջավոր ներկայացուցիչները Նիկոլայ Պավլինի և Բենկենդորֆի Ռուսաստանը շատ լավ էին տարբերում Պուշկինի, Լերմոնտովի, Բելինսկու, Չերնիշևսկու և Դորրոյուբովի Ռուսաստանից: Ոգեշնչվելով ուս մեծ ժողովրդի այդ լավագույն զավակների գաղափարներով, նրանք անսահման սիրում էին ուսական կուլտուրան ու գրականությունը:

Միք. Նալբանդյանը—բոցաշունչ հայ վաթսուականը, մինչսովետական շրջանի մեր հասարակական մտքի ամենալուսավոր այդ դեմքը—հայ գրական և քաղաքական միտքը բարձրացրեց մինչև Գերցեն ու Չերնիշևսկի՝ առաջինի հետ կապված լինելով ուսուցիչին ընդհատակյա աշխատանքով, երկրորդի հետ՝ գաղափարականորեն:

Ռուսական ուսուցիչին դեմոկրատներին դաշնակցած Միք. Նալբանդյանն ու մյուս հայ վաթսուականները մինևույն կրքով ու մինևույն նպատակների համար պայքարում էին ցարիզմի դեմ:

Գյուղացիական ռեֆորմի նախօրյալին Մոսկվայում Միք. Նալբանդյանի և Ստ. Նադարյանի ձեռքով հիմնադրված «Հյուսիսսփայլ»-ը դարձավ մեր «Современник»-ը՝ հայ վաթսուականների մարտական օրգանը:

Թե որքան ուժեղ էր «Современник»-ի այդ ազդեցությունը «Հյուսիսսփայլ»-ի վրա, այդ մասին վկայում են «Современник»-ից վերցրած առանձին հոդվածների թարգմանությունները, փոխադրություններն ու էպիգրամները և թե նշանավոր վաթսուական, «Հյուսիսսփայլ»-ի աշխատակից բանաստեղծ Սմր. Շահազիզի վկայությունը:

«Ոո՞ք չկա, որ,—գրում է նա Բուր. Վեսելովսկուն ուղղած իր հայանի նամակում,—իմ, ինչպես և մեր ամբողջ սերնդի վրա ուժեղ ազդեցություն են գործել ռեֆորմների դարաշրջանը և նրա անդրադարձումը ուսական կյանքի վրա: «Լևոնի վիշալը», որտեղ մերկացվում են հայ իրականության մութ երևույթները և արտահայտվում նրա վերածնության հույսերը, զգալի չափով ստեղծվել է այն ոգևորության շնորհիվ, որ առաջ էր եկել գյուղացիների ազատության, Հիշում եմ, թե որքան սրտիս մոտ էի ընդունում

այդ անցքը... Ընկերներին չըջանում ես պատկանում էի այն երիտա-
սարդների թվին, որոնք ամենից ավելի եռանդով էին հետևում ողորմա-
սագրերին, օրինակ՝ «Современник»-ին, և նրանց մեջ արժարժվող հարցե-
րին... 1859 թ. «Современник»-ից է տոնված «Լևոնի վշտի» երգերից
մեկի էպիգրաֆը՝ Դորրոյությունովի «Милый друг, я умираю» բանաստեղ-
ծության ընթերցումը ներշնչեց ինձ սեփական մի բանաստեղծությու-
ն գրելու գաղափարը. նա սկսվում է համարյա այնպես, ինչպես Դորրոյու-
թյունովի բանաստեղծությունը, բայց կրում է այլ բնույթ և վերաբերում է
հայերի վիճակին»։

«Հյուսիսափայլ»-ի էջերում է, որ ուռիչ ողուս նշանավոր գրողների
հետ թարգմանվում է նաև Լեոնտովը և ստանում այնպիսի գնահատա-
կան, ինչպիսին կարող էր տալ միայն ողուս ուղուցիտն դեմոկրատիայի
գաղափարակիցն ու գործակիցը՝ Սևակյան նախքան «Հյուսիսափայլ»-ի Լեո-
նտովին տված գնահատականի քննությանն անցնելը պետք է նշել, որ
Լեոնտովը Պուշկինի հետ, մինչ այժմ գոյություն ունեցող տվյալների
համաձայն, հայերեն թարգմանվել է 1840-ական թվականների սկզբներին։
Ռուս նշանավոր գրողներին, այդ թվում Պուշկինին և Լեոնտովին, հայ
իրականությանը ծանոթացնելու գործում խոշոր դեր է կատարել Լազարյան
ճեմարանը։ Ռ. Պատկանյանը Մկրտիչ էմինի մասին գրած իր հիշողու-
թյուններում պատմում է.

«...Պուշկինի և Լեոնտովի գրվածքն առաջին անգամ մեղ ծանոթա-
ցուց նա (Մկրտիչ էմինը՝ Ա. Ի.). շատ անգամ, հենց յուր դասի միջոցին,
ձեռքը առնում էր նոցա շարադրությունները և կարդում էր մեղ համար, և
այդ կերպով մեր մեջ սեր և ճաշակ էր ձգում այդ և ուրիշ ողուս հեղինակ-
ների մասին»։³

Լեոնտովի առաջին հայ թարգմանիչը նույն Լազարյան ճեմարանից
հաշտարխանցի մի ուսանող է՝ Հակոբ Համադասպյան, որ 1843 թ. Մոսկ-
վայում հրատարակում է ողուս բանաստեղծներից իր կատարած թարգմա-
նությունների մի ժողովածու, ուր տեղ էին գտել Պուշկին, Լեոնտով,
Ժուկովսկի, Բարատինսկի և Գնեդիչի՝ թարգմանության լեզուն գրաբար է։
Համադասպյանի ժողովածվում Լեոնտովից գտնում ենք միայն երկու
բանաստեղծության թարգմանություն՝ «Հրեշտակը» և «Եղևնի» (ըստ թարգ-
մանչի՝ «Եղեին»)։

Այնուհետև մի ամբողջ տասնամյակ չենք հանդիպում Լեոնտովից
կատարված և ոչ մի թարգմանության։ 1850-ական թվականների առաջին
կեսին Միք. Նալբանդյանն իր առաջին բանաստեղծական փորձերի հետ
թարգմանում է նաև Լեոնտովի «Մարգարեն»-ն, Նրա այս թարգմանու-

³ Մի բանաստեղծություն է՝ նվիրված Խաչիայի ազգային-ազատագրական շարժ-
մանը և Գարիբալդին։ Ա. Ի.

² Ю. Веселовский—«Русское влияние в современной армянской лите-
ратуре», М. 1909, стр. 14.

³ Մկ. էմին—«Երկասիրություններ», Մոսկվա, 1898, Բ. Պատկանյան—
«Մանկական հիշողություններ պր. Մ. էմինի մասին», էջ 210.

⁴ Գրքի տիպոգրաֆերը «Թարգմանությունը արձակ, և ոտանավոր ի ողուսց լե-
զուէ ի հայ բարբառ, ի Ժուկովսկիոյ, Պուշկինէ, Լեոնտովոյ, Բարատինսկիոյ և Գնեդի-
չէ. Յ. Համադասպեանց, ի Մոսկով, 1843:

թյունը ժամանակին չի տպագրվել: Թարգմանության ձեռագիրը (արտագրութիւն) գտնվում է Պետական Գրական Թանգարանում, և հրատարակված է միայն վերջերս, ընկ. Նշ. Մուրադյանի խմբագրած Միք. Նալբանդյանի «Էնտիր բանաստեղծութիւնները» ժողովածվում:

Տեսորը, որի մեջ գտնվում է «Մարգարեի» թարգմանութիւնը, կրում է 1855 տարեթիւը, ըստ այդմ, Միք. Նալբանդյանը թարգմանութիւնը կատարած պիտի լինի մինչև 1855 թ., ավելի կոնկրետ՝ 1853—55 թ. թ. ժամանակամիջոցում: Այդ ենթադրութիւնը հավանական է դառնում մանավանդ այն պատճառով, որովհետև Մ. Նալբանդյանն, ինչպես հայտնի է, Մոսկվա է եկել 1853 թ.: Իբրև Միք. Նալբանդյանի գրչի առաջին վարժութիւններից մեկը՝ թարգմանութիւնը թույլ է:

Ուշագրավ է, որ Միք. Նալբանդյանը «Մարգարե»-ին վերագառնում է ավելի հասուն շրջանում, իր «Հիշատակարաններ»-ում:

Մեծ ուղուցիոներ-գեմուկրատի համար շատ բնորոշ է նրա սերը դեպի Լեւոնտովի Մարգարեն—հասարակական խոցերի խիղախ մերկացնողի և խարաղանողի այդ գեղեցիկ կերպարը:

Ոոսելով ճշմարտության մասին, Միք. Նալբանդյանը բերում է Լեւոնտովի «Մարգարե»-ի նշանավոր քառատողը.

«...Մտածող մարդիկ,—գրում է նա,—վաղուց ահա փորձով իմացած են, որ ճշմարտութիւնը հալածվում է միշտ և պատճառ է լինում յուր պաշտոնի հալածանքին. մի այդպիսի անբախտ պաշտոնի համար ճշմարտութիւնը շատ անգամ ճանապարհ է բացել դեպի գլխապարտության սյունը (էշտֆոդ), շատ անգամ հանել է նորան փայտակուտի վրա: Բնարկե կարգացած կլինեք Լեւոնտովի Մարգարեն. նա մի տեղ ասում է.

Սկսեցի սեր քարոզել,
Սուրբ ուսումը ճշմարտության,
Եվ իմ բոլոր մերձավորքը
Կամենին ինձ քարկոծ առնել:

«Եվ արդարև,—ավելացնում է Նալբանդյանը,—ճշմարտութիւնը մի այնպիսի բան է, որ պատճառ է լինում մարգերի միմյանցից հեռանալուն»¹

Պետք է նշել, որ հիշյալ քառատողը տարբերվում է նույն բանաստեղծության Միք. Նալբանդյանի առաջին թարգմանութիւնից: Ամենայն հավանականութեամբ, զոր չլինելով իր առաջին թարգմանութիւնից, նա թարգմանել է երկրորդ անգամ: Դժբախտաբար «Մարգարե»-ի երկրորդ թարգմանութիւնն ամբողջութեամբ մեղ չի հասել: Մնացել է միայն հիշյալ քառատողը ուղուցիոներ-գեմուկրատի «Հիշատակարաններ»-ում:

Հետաքրքրական է, որ «Մարգարե»-ն երրորդ անգամ թարգմանվում է Ստ. Նազարյանի ձեռքով և տպվում «Դև»-ի թարգմանության հետ միաժամանակ՝ Լեւոնտովի այդ նշանավոր պոեմին կցած հրատարակողի ներածականում:

¹ «Հյուսիս-ստեփան», 1858, ամսաթիւի № 5, էջ 383 և՝ Միք. Նալբանդյան—Երկեր, հատ. 1, 1903, էջ 146—147.

² «Հյուսիս-ստեփան», 1863, գեղեմբեր, էջ 53.

Խոսելով Մարդարեւ-ի մասին, Նազարյանն այն համարում է «մի տեսակ սրտից դուրս խթած հառաչանք այն համեմատության վերա, որ կար մտավոր կատարելատիպի (իդեալի) և իրական ստույգ աշխարհի մեջ, այն առնչության վերա, որ մի հոգիազգաց մարդ ունի դեպի ընկերությունը (— հասարակությունը, Ա. Ի. — արդարև մի շատ վերին, հանճարեղ սրտից դուրս խթած հառաչանք»:

1860 թ. Մոսկվայում լույս տեսած Լադարյան Ճեմարանի աշակերտ Սմբ. Շահազիզի «Ազատության ժամեր» ժողովածվի դրարար բանաստեղծությունների մեջ հանդիպում ենք Գյոթեի «Wandrer's Nachtlied» («Քափառականի դիշերային երգը») նշանավոր բանաստեղծության թարգմանությանը՝ «Անդորրություն» վերնագրով: Թարգմանության տակ դրված է 1859 թիվը:

Չի հիշատակված Գյոթեի անունը և ոչ նույնիսկ այն, թե դա թարգմանություն է կամ փոխադրություն: Ամենայն հավանականությամբ, Ամբ. Շահազիզը Գյոթեի այդ բանաստեղծության թարգմանությունը կատարել է ոչ թե բնագրից, այլ Լեբմոնտովից: Այս փաստը հիշատակում ենք ցույց տալու, որ Լեբմոնտովի միջոցով հայ գրողները միաժամանակ հաղորդակից են դարձել եվրոպական դրականության կլասիկ ներկայացուցիչների ստեղծագործություններին:

Սմբ. Շահազիզը 1865 թ. հրատարակելով «Լեոնի վիշտը և զանազան բանաստեղծություններ» ժողովածուն, իր պոեմի համար իբրև մոտոռ ընտրել է Լեբմոնտովի «Герой нашего времени» վեպի նախաբանի նշանավոր տողերը. «Довольно людей кормили сластями: у них от этого испортился желудок; нужны горькие лекарства, едкие истины»: Հասարակական խոցերը մերկացնող ու խարազանող իր պոեմի համար Սմբ. Շահազիզն ավելի հաջող բնաբան ընտրել չէր կարող:

Հետաքրքրությունը դեպի Լեբմոնտովն առանձնապես աճում է 60-ական թվականներին, ե հատկապես ռեֆորմյան շրջանում՝ ոռուսական գեմոկրատական շարժման ամենահոուն ժամանակ: Նշանակալից է, որ այդ հետաքրքրության կենտրոնը դառնում է հայ գեմոկրատական մտքի օրգանը՝ «Հյուսիսափայլը»-ը: 1861—64 թ. թ. ընթացքում այդ ամսագրի էջերում տպագրվում են՝ «Օղեղեն նավ», «Մարտ պատերազմի» («Борьба»), «Մարդարեւ», «Պաղեստինի ոստի» փոխադրությունը՝ «Վարդի ոստ» վերնագրով, և ապա. «Лемон»-ը՝ Մանուկ Սազաթյանի կլասիկ թարգմանությամբ:

Ուշագրավ է Լեբմոնտովի «Ветка Палестины» բանաստեղծության փոխադրությունը՝ կատարված Զալալյանցի ձևաքով: Հայացնելով Լեբմոնտովի այդ բանաստեղծությունը, Զալալյանը նրան հաղորդել է պանդխտական տրամադրություն, իսկ պանդխտությունն, ինչպես հայտնի է, եղել է հայ ժողովրդական երգերի հիմնական մոտիվներից մեկը:

...Ո՛ր անդուծի ձեռն է քաղել
Դեզ քո թփից մայրենական,
Պամ ձր անդուծն է քեզ տնկել
Այս աշխարհում պանդխտական:

¹ «Հյուսիսափայլ», 1861, էջ 339—340.

...
 Ի՞նչ մի ազուով վատահամբավ
 Դուռնակում է նոր գույժ, նոր ցավ,
 Իսկ դու տխուր, վերավորված
 Կախել ես գլուխդ թառամած:

Ջալալյանը Լեւոնտոյի բանաստեղծութեան մեջ դրել է ոչ միայն
 «մայրենական երկրից» պանդխտած անհատի տխուր հույզերը, այլև, առա-
 վելապես, քաղաքական ինքնուրույնութունից և հայրենիքից զրկված հայ
 ժողովրդի վիշաք:

Խիստ բնորոշ է նաև, որ Սմբ. Շահադիդի «Ազգային վիճակ» բանա-
 ստեղծութեան մեջ,—նախապես տպագրված «Հյուսիսափայլ»-ի 1862 թ.
 երրորդ տասնամյակում և ապա արտատպված ժողովածվում,—տեսնում
 ենք Լեւոնտոյի «На смерть поэта» հռչակավոր բանաստեղծութեան
 ազդեցութիւնն ընդհանրապես, և հատկապես հետևյալ տողերում՝

...Բայց սպասեցեք, որդիք խավարի,
 Կգա ձեր վերա անեղ գատաստան...

Այսպիսով, լինելով հայ հասարակական մտքի կենտրոնն ու ժամա-
 նակի ամենաառաջացած և ամենադեմոկրատական ուղղութեան ժառանգը
 մեր իրականութեան մեջ, «Հյուսիսափայլ»-ը միաժամանակ հանդիսանում
 է Լեւոնտոյի ամենաեռանդուն մասսայականացնողն ու ամենաճիշտ ար-
 ժեքավորողը:

Հարկավ, բնավ էլ պատահական չէ, որ «Հյուսիսափայլ»-ում, և ոչ մի
 այլ ամսագրում է Լեւոնտոյին այդքան թարգմանվում և, որ նշանակալիցն
 է, այդքան ճիշտ ու ժամանակի համար ամենահամարձակ, ամենաճիշտ
 դնահատականն ստանում:

«Հյուսիսափայլ»-ի շուրջը համախմբված մեր վաթսուեականները միան-
 դամայն ճիշտ էին ըմբռնում Լեւոնտոյի ստեղծագործութեան հասարակա-
 կան-քաղաքական նշանակութիւնը:

«Ինչ»-ի թարգմանութեանը կցած իր նախաբանում երատարակողը
 (Ստ. Նազարյանը) մի քանի ընդհանուր կարգի տեղեկութիւններ աւելի
 Լեւոնտոյի մասին, ցավ է հայտնում, որ «Հյուսիսափայլ»-ի մեջ մինչ
 այդ ոուս դրականութեան մասին հոգւածներ և ուսումնասիրութիւններ
 չեն եղել, հետևապես ինքը չպիտի կարողանա Լեւոնտոյին կապել «ուս-
 ասց լիտերատուրայի բովանդակ ընթացքի հետ»:

Այստեղ կարևոր է ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վրա,
 որ Նազարյանն անհրաժեշտ էր համարում գրական կոնկրետ երևույթները
 և առանձին հեղինակի ստեղծագործութիւնը քննել ոչ թե անժառ փերց-
 բած, այլ տվյալ գրականութեան պատմութեան բովանդակ ընթացքի
 հետ:

Հետաքրքրական է նաև, որ Նազարյանը Լեւոնտոյին համարում է
 «Ալեքսանդր Պուշկինի հավասարակշիռ հաջորդը, կամ թե մանավանդ իրրե-
 նրա վաստակակիցը» (ընդգծումն իմն է: Ա. Ի.):

«Եվ Լեւոնտոյի վախճանը եղավ նույնպես, որպես եղել էր Պուշկինի
 վախճանը», դրում է հրատարակողը: «Լեւոնտոյը, հագիվ թե երեսուն տա-
 րեկան, մեռավ 1841 թ. հուլիսի 27-ին, մի մենամարտութեան (դուել) մեջ

կովկասում, ուր աքսորված էր նա այն վրեժխնդիր տաղերգության պատճառով. որ հնչեցուցել էր Պուշկինի գերեզմանի վերա՝ (Ընդգծումն իմն է՝ Ա. Ի.)¹

Ստ. Նազարյանի այս տողերից պարզ երևում է, որ նրա և Հյուսիսսփայլականների համար գաղտնիք չէին ոչ Պուշկինի, ոչ Լեբմոնտովի սպանության քաղաքական շարժառիթները, այն, որ ողու հանճարեղ բանաստեղծները ցարիզմի դոհերն էին:

Անցնելով Լեբմոնտովի ստեղծագործության ընթացքում, Նազարյանը նրան համարում է «ձեղքած և պատառած հակահակությունների (— հակասությունների —) նկատի ունի սոցիալական հակասությունները: Ա. Ի.) բանաստեղծ: Լեբմոնտովի ստեղծագործությունը նա համարում է արդյունք այն հակասության, որ գոյություն ունեւ ժամավորական կատարելատիպի (իդեալի) և իրական, ստույգ աշխարհի մեջ»:

Բայց, Ստ. Նազարյանի ներածության մեջ ամենանշանակալիցն այն է, որ նմանության եղբեր գտնելով Լեբմոնտովի և Բայրոնի միջև, նրանց խիստ որոշակիորեն սահմանադատում է՝ անգլիական լորդի (Բայրոնի) հուսահատությունը հակադրելով՝ «աղատաղգաց ողուի» (Լեբմոնտովի) «հուսահատությանը՝ դեմ հանդիման ցարի բռնակալությանը», որ Նազարյանը համարում է «ավելի արդարացի և հիմնավոր»: Բայց բերենք «Հյուսիսսփայլ»-ի խմբագրի այդ նշանավոր տողերն ամբողջությամբ. «Սակայն, պիտի է ասել, որ Լեբմոնտովի բանաստեղծությունը, և՛ իրրև նմանողություն Բայրոնի բանաստեղծության, և տռավել ազատ, առավել ինքնիշխան և առավել այրական խոսք, որ Ռուսաստանը խոսել է մինչև այսօր աշխարհի հրապարակում: Լեբմոնտովի բանաստեղծական պաշտոնը էր մի ազատ, առանձնավոր, բարձրագույն հոգու պատերազմ ընդդեմ մի անօգոստի ինքնակալության (= самодержавие. Ա. Ի.), որ կամեր մեծ ու փոքր հավասարել միմյանց և, անտարակույս, այս ազատագրաց ողուի հուսալքությունը դեմ հանդիման ցարի բռնակալությունը էր ավելի արդարացի և հիմնավոր, քան բեռնակալության լորդի հուսահատությունը դեմ հանդիման յուր աշխարհի որպիսությունը»: (Ընդգծումն իմն է՝ Ա. Ի.)¹

Ցարական ցերեբրների՝ ցենզորների քթի տակ Լեբմոնտովի ստեղծագործությունը մեկնաբանելով որպես «բարձրագույն հոգու պատերազմ ընդդեմ ցարի բռնակալությանը՝ և համարելով այդ «արդարացի և հիմնավոր», Ստ. Նազարյանը հայ հասարակական-քաղաքական միտքը և նրա մարտական օրգան «Հյուսիսսփայլ»-ը բարձրացնում էր ողուական ռեուլուցիոն-դեմոկրատական մտքի այն բարձր աստիճանին, որի վրա կանգնած էին Բելինսկին, Չերնիշևսկին և Դոբրոլյուբովը:

Երբ Ստ. Նազարյանը գրում էր իր նշանավոր տողերը, Դոբրոլյուբովը մեռած էր, իսկ Չերնիշևսկին և նրա հայ գաղափարակիցը՝ Միք. Նալբանդյանը՝ ձերբակալված էին Պետրոպավլովյան ամրոցում:

Շատ բնորոշ է նաև, որ Ստ. Նազարյանը հայ ընթերցողի ուղադրությունը հրավիրում է Լեբմոնտովի հատկապես այն երկերի վրա («Мцыри», «Хаджи-Абрек», «Демон», «Измаил-бей»), որոնց մեջ ողու մեծ բանաստեղծը երգել է կովկասյան ցեղերի աղատասեր և ապաստաննչ զավակներ:

¹ «Հյուսիսսփայլ», 1863, դեկտեմբեր, էջ 53—54.

ըին, նրանց պայքարը ցարիզմի և նրա բերած «շղթաների ամրապնդի» («позор пень») դեմ:

Նշանակալից է, որ Սա. Նազարյանը նշելով Լեւոնապոլսի կովկասյան պոեմների բարձր արժանիքները («Մծիբի» և այլն), ընդգծում է, որ «առավել բարձր բազմիցուցել է յուր անձը, ավելի ինքնաստեղծ արարիչ (տիեզերական ստեղծագործող, ինչպէս ինքն է) Լեւոնապոլսի յուր հարազատ, բուն ողբասկան երգի մեջ՝ ճշար Իվան Վասիլիւիչ, նորա մանուկ թիկնապահ Կիրիլ-բեկիչը և հանդուգն վաճառական Կալաշնիկովը»: «Պատճառ,— շարունակում է Նազարյանը,— այս փոքրիկ վիպասական երգը բացատրում է հին սլավոնական, ազգային բանաստեղծութեան հոգին և ձևը անզուգական պարզութեամբ և ստուգութեամբ, այլև մի կատարյալ ճարտարապետական գործի կերպարանքով»:

Ինչպես հայտնի է, «Կալաշնիկովի երգի» նկատմամբ բարձր կարծիքի էին ողբ ու ուրուցիոն դեմոկրատները՝ Բելինսկին, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը, որոնք դրվատում էին Լեւոնապոլսի այդ սքանչելի գործը ոչ միայն նրա ազգային ձևի և գեղարվեստական հմայքի պատճառով, այլև գերազանցապես այն բանի համար, որ նա՝ Լեւոնապոլսի այդ գործը իր ոգով ուղղված էր ցարի և օպրիչնիկների դեմ:

«Հյուսիսափայլ»-ի համար, հարկավ, պատահական չէր նաև «Դև»-ի ընտրութեանը: Թե՛ թարգմանիչը՝ Մանուկ Սաղաթյանը և թե՛ Սա. Նազարյանը անշուշտ լավ էին ըմբռնում Լեւոնապոլսի այդ նշանավոր պոեմի բողոքող, ազատասիրական ոգին:

«Դև»-ի մեջ Լեւոնապոլսի արտահայտել է բողոք՝ ճորտատիրական-ցարական դատան կարգերի նկատմամբ: Չնայած պոեմի ֆանտաստիկական բնույթին, չնայած նրա ուղիղ քննադատական ձևին, «Դևը» հասարակական-քաղաքական կոնկրետ բովանդակութեան և իմաստ ունի: Եվ հենց այդ է պատճառը, որ նա ժամանակին արգելված է եղել, բայց ձեռագիր վիճակում ձեռքից-ձեռք է անցել և տարածվել:

Դևն ապստամբում ու պայքարում է երկնի և երկրի դեմ: Նա ասեղնութեամբ է լցված դեպի երկրային այն կարգերը՝

Ուր ոչ ճշմարիտ բախտ կա կենսական,
Եվ ոչ հարատև գեղեցկութուն կա,
Ուր միայն պատիժն ու մեղքն են լիութի.
Ուր կյանքն անցնում է փոքրիկ կիրքերով.
Եվ ուր չգիտեն թառնց երկյուղի
Ոչ արհամարհել, ոչ սիրել հոգով:

Եվ կամ՝ Թամարին դառնալով՝ Դևն ասում է.

«... Ճակատագիրը չի սահմանել քեզ,
Որ նախանձավոր բրտութեանը տակ
Իբրև մի ստրուկ, անհայտ թառամես,
Կեղծ ընկերների, թշնամիների,
Կամ թե փոքրոգի և սառ մարդոց մեջ,
Ունայն և ծանր աշխատանքների,
Անպտուղ հոստ և երկյուղի մեջ»:

Մի կողմից ձգտում դեպի գործունեություն, հերոսություն, մյուս

կողմից՝ կաշկանդված վիճակ — ահա Լեւոնտովի դժգոհության, անհանգըստության, արտունջի ու բողոքի, նրա «դեմոնականության» պատճառը։ Մենակության ավայտանք, գործելու ծարավ, բողոք կաշկանդումների դեմ, աղաաության չկոչ, և միաժամանակ տվյալ հասարակական-քաղաքական պայմաններում այդ ծարավը հագեցնելու, այդ աղաաությունը նվաճելու անհնարինություն — ահա ինչ արամադրությունների և ինչ հոգեվիճակի ծնունդ է Լեւոնտովի «Դեմ»-ը։

«Տխրագին գեղ, արտաքսված հոգին» հանդես գալով բողոքի և բուռն-աարի կերպարանքով, ժխտում է անկատար և ստրկական երկրային կարգերը, և դրա մեջ է Լեւոնտովի պոեմի հասարակական-քաղաքական խոշոր նշանակությունը։

Ինչիսկին, Չերնիշևսկին, Դորրոյուբովը շատ բարձր էին գնահատում Լեւոնտովի տաղանդը, հարկավ, նկատի ունենալով ոչ միայն նրա ստեղծագործության խոշոր գեղարվեստական արժանիքները, այլև հասարակական-քաղաքական նշանակությունը։

Պատանեկական շրջանի իր օրագրերից մեկում Չերնիշևսկին Լեւոնտովի մասին խանդավառությամբ լի հետևյալ տողերն ունի.

„Они наши спасители, эти писатели, как Лермонтов и Гоголь“. „Гоголь и Лермонтов кажутся недосыгаемыми, великими, за которых я готов отдать жизнь и честь“.¹

Օրագրի մի այլ էջում նա գրում է. «Լեւոնտովը և Դորդը ցույց են տալիս, որ Ռուսաստանի համար հասել է ժամանակը գործելու այնպես, ինչպես նրանցից առաջ գործել են Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան»։²

Առաջին երկու երկրների անունները տալով, ինչ խոսք, Չերնիշևսկին ակնարկում էր 1848 թ. հեղափոխությունը, նշելով, թե ռուսական ուղուցիտն շարժման համար ինչ նշանակություն ունեն Լեւոնտովի և Դորդի ստեղծագործություններն իրենց մերկացնող ռեալիզմով, ըմբոստ, ազատատենչ տրամադրություններով և առաջադիմական հասարակական գաղափարներով։

Ա. Ի. Գերցենն իր «О развитии революционных идей в России» աշխատության մեջ ասում է.

„Лермонтов... всецело принадлежит к нашему поколению. Мы все, наше поколение, были слишком юны, чтобы принимать участие в 14 декабря.³ Разбужденные этим великим днем, мы видели только казни и ссылки. Принужденные к молчанию, удерживая слезы, мы выучились сосредоточиваться, скрывать свои думы,— и какие думы!“

Իրենց վերաբերմունքով դեպի Լեւոնտովը և նրա ստեղծագործությունը՝ հայ վաթսուականները շփման շատ եզրեր ունեն ռուս ուղուցիտն դեմոկրատների հետ։ Միք. Նալբանդյանը, Ստ. Նազարյանը, Մանուկ Սաղաթյանը և ուրիշները, — խորն ըմբռնելով Լեւոնտովի ստեղծա-

¹ Чернышевский, „Полное собрание сочинений“, 1939 г., том 1, стр. 58.

² Անդ. էջ 127.

³ Դեկտեմբերյանների ազատության ժամանակ Լեւոնտովը ընդամենը 11 տարեկան էր. իսկ Գերցենը՝ 15.

գործութեան հասարակական-քաղաքական իմաստը, թարգմանելով և մաս-
սայականացնելով նրա գործերը, ոուս հանճարեղ պոետին անուղղակի մաս-
նակից էին դարձնում այն պայքարին, որ մղում էին իրենք՝ հանուն ժո-
ղովրդական լայն մասսաների լուսավորութեան և աղատութեան:

1840-ական թվականներից մտնելով հայ իրականութեան և գրակա-
նութեան մեջ, Լեւոնուհիլը մեծապես նպաստել է մեր հասարակական մտքի
և գրական կուլտուրայի զարգացմանը, միաժամանակ հանդիսանալով մի
գեղեցիկ շաղկապ հայ ժողովրդի և ոուս մեծ ժողովրդի միջև:

Մեր վաթսուհականների ջերմաշունչ և խիզախ խոսքը Լեւոնուհիլի
մասին՝ հնչեցրած ցարիզմի տիրապետութեան խավար և դաժան ժամա-
նակներում՝ հանդիսանում է հայ հասարակական մտքի պատմութեան ամե-
նալուսավոր, ամենապայծառ էջերից մեկը: